## ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը պարբերաբար կազմակերպում է երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների գիտական նստաշրջաններ:

Առ այսօր հրատարակվել են 25 նստաշրջանների զեկուցումների թեզիսներ, որոնք հանդիսացել են ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողներից շատերի առաջին քայլերը գիտության մեջ: Երիտասարդների գիտական գործունեության հետագա խրախուսման նպատակով նստաշրջանների հրավիրման, թեզիսների տպագրության հետ մեկտեղ, ինստիտուտը նախատեսում է առանձին գրքույկներով, հոդվածների ժողովածուներով հրատարակել աշխատությունների շարք: Ներկա ժողովածուն այդ շարքի առաջին գրքույկն է, որում տեղ են գտել հայոց պատմության տարբեր հիմնահարցերին վերաբերող հետաքրքրական հոդվածներ, որոնք նախապես քննարկվել և հրատարակության են երաշխավորվել ինստիտուտի համապատասխան բաժինների կողմից: